

շին Հերթին անձնանունները, անդանունները հասարակ գոյականի մաս։ Օրինակներ՝ Պիսմաբ իշխանին խոսքին սա կը հասկցուի, Մենք Արտաստ դերեզմանատուն մը ունինք Զերզնոյի մասն և այլն։ Անգղադատնայով ուղղական հարգով արտահայտված լրացման երկրորդ տեսակին՝ Հեղինակը նշում է. «...մակդիր որոշիչն օժտված է արտահայտականությամբ... Օրինակներ՝ Ոռլլ մը նայումս, փունջ մը ժպետ՝ Քուստլ մը խոսք գիմնց իմ սիրտ, Լուկ նուտախ, ժպտ, արցունք տեսի նախ և այլն։ Կամ մեկ այլ դեպքում նշվում է. «Գեղարվեստական խոսքում ավելի շատ է ենթակայական սեռականի փոխարկության կիրառությունը։ Այսպես, կազմվում են՝ Հողմերի շունչը, ծովերի մտունը, արեւի համբույրը, հովի գրույցը, մուրճի լուսությունը...» (Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, էջ 63)։

Իսկ գրական հայերենի երեք փուլերի (գրաբար, միջին հայերեն, նոր հայերեն) բառակապակցություններն ուսումնասիրված են հիմնականում մենույն նպատակադրումով, հետազոտական նույն եղանակներով, աշխատմանայնիվ էություն հաղթահարված են անխուսափելի թվացող կրկնությունները։ Դա բացատրվում է նրանով, որ այդ տարրեր փուլերի համապատասխան նյութը ուսումնասիրված է ինքնին, իր յուրահատկությունների պարտադրած պահանջների հաշվառումով։ Ահա թե ինչու միևնույն երևույթի ուսումնասիրությունը տարբեր գրականությունում հանգեցնում է մեր լեզվի տարրեր փուլերի ոչ միայն բառակապակցական ընդհանրություններ-

րին, այլև որոշակի տարբերությունների բացահայտմանը։ Հատկապես վերջին հանգամանքի անուշխամբ անհրաժեշտ է ընդգծել ուսումնասիրության կարևոր արժանիքներից մեկը պատմականորոշ այնպիսի մի երևույթ, ինչպիսին է մեր լեզվի բառակապակցական համանշտության հարատվությունների ցուցադրումը։ Ուսումնասիրությունն իրավացիորեն հեղինակին հանգեցրել է այն եզրակացությանը, որ բառակապակցությունները բավական շատ հնարավորություններ ունեն շարահյուսական համանիշների գրանորման համար։ Այն համոզմանը լինելով, որ շարահյուսական համանշտությունը կարող է լինել կամ նույնանշություն, կամ համանշտություն՝ հեղինակը նշում է, որ վերջինս ավելի շատ է տարածված, քան առաջինը (օրինակ՝ մեկին հանելի և մեկի համար հանելի, ընկերների հետ գնալ և ընկերներով գնալ և այլն (տե՛ս Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, էջ 36)։ Այս տիպի որոշ փաստերի արժեքավորման հարցում թերևս հնարավոր չլինի համաձայնել հեղինակին հետ։ Մեզ թվում է, օրինակ, խոսել գործից և խոսել գործի մասին կապակցությունները ոչ թե շարահյուսական նույնանիշներ են, այլ՝ համանիշներ, քանի որ ունեն ռեալական, կիրառական էական տարբերություններ։ Կապակցից դուրս է, որ հայերենի շարահյուսական համանշտությունն ուսումնասիրող ռեալորանը իրեն օգտակար շատ նյութ կարող է գտնել վ. Քոսյանի սույն աշխատություններում։

Հ. Մ. ԱՄԱՆԱՆ

Ս. Ա. ՄԵԼՔՈՆԱՆ

YOVHANNES 'ILKURANCI AND THE MEDIAEVAL ARMENIAN LYRIC TRADITION, by James R. Russell, University of Pennsylvania Armenian Texts and Studies, 7, Scholars Press, Atlanta, Georgia, 1987.

Պենսիլվանիայի համալսարանի «Հայկական ընդերքի և ուսումնասիրություններ» մատենաշարով լույս տեսած վեց հայագիտական աշխատություններից այժմ հաջորդեց յոթերորդը՝ «Հովհաննես Թլկուրանցին և հայ միջնադարյան քնարերգական ավանդույթը», աշխատասիրությամբ Զեյնա Ռ. Ռասելի։

Ներածության մեջ Զ. Ռ. Ռասելը ընդգծում է, որ միջնադարյան Հայաստանի քնարերգության անստեղծ Հովհաննես Թլկուրանցին քիչ է հայտնի Արևմուտքում։ Այս գրքում ներկայացված է Թլկուրանցու բանաստեղծությունների

(տաղերի) անգլերեն թարգմանությունը. սա բանաստեղծի տաղերի առանձին հրատարակությունն է օտար լեզվով։

Ուսումնասիրողը նշում է, որ պետք է ամփոփ ձևով ցույց տալ հայ քնարերգության արմատները, որոնք սերտորեն առնչվում են նախամահդական իրանի մշակույթին։ Դեռ հայոց Արշակունյաց թագավորության օրերից հայերն ազդվել են հարևան զրադաշտական Պարսկաստանի մշակույթից։ Հայ դասական պատմիչները՝ Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի և ուրիշներ, վկայում են, թե հայոց Արշակունի

արձանները պարսից Շահանշահի աշ կողմն էին նստում խնջուքների ժամանակ (անշուշտ նախաքան պարսից Արշակունյաց անկումը): Երկարատև առնչությունների արգասիք էր և այն, որ հայերենը մեծ թվով փոխառություններ կատարեց պաշլավերենից:

Թեև քրիստոնեության ընդունումից հետո Հայաստանը կրոնական ասպարեզում կտրվեց Սասանյան Պարսկաստանից, այսուհանդերձ մշակութային ավանդույթները շարունակեցին գոյատևել: IV դարում հայոց թագավորները զվարճանում էին գուսաններով (պաշլավերեն *gusan*), Երբ Անհուշ բերդում բանտարկված Արշակ արքային այցելեց Դրաստամատը, ռուբին առնելը գնա գուսանա՞ք: Իսկ Պապ Թագավորին սպանեցին այն պահին, երբ ռեայեր ընդ պէս պէս ամբոխ գուսանացնա:

Համենայն դեպս քրիստոնեությունը որոշ փոփոխություններ մտցրեց այս ասպարեզում. զարգացավ հոգևոր երգը՝ շարականը և աշխարհիկ բանաստեղծությունը (Դավթակ քերթող): Այդ զարգացումը շարունակվեց հատկապես Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում: Սակայն Հայաստանը շատ տուժեց սելջուկ թուրքերի ներխուժումից և դրանից հետո հայ մշակույթը հիմնականում զարգացավ Կիլիկյան Հայաստանում:

Այս ընթացքում հայերենի զարգացումը նոր երևույթն էր առաջ բերեց: Արշակունյաց թագավորության անկումից հետո զբաղվող կողքին տեղական խոսվածքներ առաջացան: VIII դարում Ստեփանոս Սյունեցին տարբերում է «ստանակ» կամ «միջերկրեայ» լեզուն «եզերական» բարբառներից: Արդեն XII դարում Մխիթար Հեռացին գրում էր ժողովրդական հայերենով:

Միջնադարյան հայկական քնարական բանաստեղծությունը ծագում է հին գուսանական ավանդույթներից: Այս բանաստեղծության ակնավոր ներկայացուցիչներն են Հովհաննես Թլկուրանցին, Նահապետ Քուլակը, Կոստանդին Երզնկացին, Գրիգորիս Աղթամարցին, իսկ ավելի ուշ շրջանում՝ Նազաշ Հովնաթանը և Սայաթ-Նուվան:

Քնարական բանաստեղծություններից բացի Հովհաննես Թլկուրանցին հեղինակ է նաև խոհական ստեղծագործությունների, որոնք հնագույն ժամանակներից տարածված էին ողջ Մերձավոր Արևելքում: Այս նույն ասպարեզում ստեղծագործել են նաև Ֆրիկը և Մկրտիչ Նազաշ:

Ներածության մեջ հեղինակը այնուհետև նշում է, որ միջնադարյան հայ բանաստեղծ-

ներից ոմանք ծանոթ էին Ֆիրդուսու «Շահնամ»ին: Կոստանդին Երզնկացին գրում է. «Այս մի կայր և Շահնամայ ասէր ձայնով. նայ եղբարք խնդրեցին թէ ի Շահնամայի ձայնն մեզ ոտանաւոր ասայ. ես չինեցի զբանքս զայս. ի Շահնամայի ձայն կարդացէք: Այստեղ ձայնը ոչ միայն տաղաչափությանն է վերաբերում, այլև երգեցողությանը, որն ավանդաբար կիրառում էին պարսկերենը իրենց ազգային դուրսագնալից կարգալիս: Քիչ բան է հայտնի Հովհաննես Թլկուրանցու կյանքից: Նրան նույնացրել են Կիլիկիայի Սսի աթոռի կաթողիկոս Հովհաննես Թլկուրանցու հետ, որը վախճանվել է 1525-ին: Սակայն Ն. Ակինյանը գտնում է, որ բանաստեղծ Հովհաննես Թլկուրանցին տարբեր է նույնանուն կաթողիկոսից և ապրել է XIV դարի վերջերին:

Ուսումնասիրողը նկատում է, որ ապրելով պատմական ժանր ժամանակաշրջանում, երբ երկրի երեսից վերանում էին ամբողջ քաղաքներ, և լենկթիմուրի արշավանքները ավեր ու սարսափ էին տարածում, Հովհաննես Թլկուրանցին ընդամենը մի ստեղծագործություն է գրել պատմական թեմայով (Տաղ քաջի Լիպարտի): Մինչդեռ իր ողջ տաղանդը բանաստեղծը անմասնորդ նվիրաբերել է սիրո և մարդկային հոգու զովերգմանը: Նա իրեն կոչում է «խե», այսինքն խենթ սիրահար կամ սիրուց խենթացած, որն այլ բանաստեղծներ ևս գործածում են:

Բանաստեղծություններից մեկում Թլկուրանցին իրեն հայտարարում է սուրբ Կարապետի (Հովհաննես Մկրտիչ) ծառայող: Բանն այն է, որ սուրբ Կարապետը եղել է հայ գուսանների հովանավորը մինչև նոր ժամանակները: Սայաթ-Նուվան իր նվագելու հմտությունը վերագրում էր սուրբ Կարապետի ուժին: Հաստ Զ. Ռասուլի այս սրբի պաշտամունքը Մուշում փոխարինել էր հեթանոս աստված Վահագնի պաշտամունքին: Սուրբ Կարապետի վանքը կոչվում էր Մշո սուլթան Մուրատատուր: Եվ գուցե Թլկուրանցին և բանաստեղծները ևրգել են Մուրատատուրի դուանը, քանզի կասկածից վեր է, որ այդ ժամանակ տաղերը ոչ միայն ասվում էին, այլև երգվում:

Այնուհետև ամերիկացի գիտնականը քննում է Թլկուրանցու երկերի տաղաչափությունը, այն համեմատելով թե՛ նախորդների և թե՛ նոր շրջանի բանաստեղծների ստեղծագործությունների հետ: Հովհաննես Թլկուրանցու բառապաշարը զերծ չէ արաբերենից, թուրքերենից և նոր պարսկերենից կատարած բառա-

թիվ փոխառություններից, մի բան. որ հատուկ է այդ ժամանակաշրջանում միջին հայերենով գրված երկերին:

Ներածության վերջում Զ. Ռ. Ռասրլը նշում է, որ անգլերեն թարգմանությունը հիմնված է բնագրի երկու բնական ռատարակությունների վրա՝ աշխատասիրությամբ էմ. Պիվազյանի (Տաղեր, Կրեան, 1960) և Նորայր արթևակյանի Պողոսյանի (Տաղադիրք, Կրեան, 1958):

Ուսումնասիրված նյութը բաժանված է յոթ դրույթների մեջ:

Ա. Սիրս և դարեան Լրդեր

Բ. Հովհաննես և Աշա

Դ. Իմաստության առդեր

Ե. Տաղ Բաշ Լիպարտի

Զ. Նարեկացու Հրաշալիքները

Շ. Սուրբ Սլեքսիանոսի առդեր

Ը. Սուղծման և Աղամի Լրդեր

Հավելվածում (էջ 188—196) տրված է Գրիգոր Նարեկացու երեք դանձերի (Լրեք

տոնական շարականներ, անդերեն թարգմանություններ:

Ա. Գանձ վեց աուր ժնդկան

Բ. Գանձ հինգ աուր ռգույ գալստեան

Գ. Գանձ խաչվերացի Լրկրորդ աուր:

Գրքի վերջում զետեղված են բանաստեղծությունների հայերեն բնագրերը (53 էջ առանց էջակայանի):

Աշխատությունը հարուստ է ծանոթագրություններով: Հիշյալ յոթ գլուխներից ամեն մեկում նախ ներկայացվում է բանաստեղծությունը, ապա տրված է անգլերեն թարգմանությունը և վերջապես՝ ծանոթագրությունները: Զ. Ռ. Ռասրլի այս աշխատությունը անկասկած կատարի հայ միջնադարյան մատենագրության կարկառուն դեմքերից մեկին անդլիսիսոս գիտական հասարակչությանը ծանոթացնելու շնորհակալ գործին:

Պատմ. գիտ. դակտոր

Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԳՅԱՆ

Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ, ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱԿԱԳՄՈՒԹՅՈՒՆԸ, ԵՐԵՎԱՆ, 1987, էջ 357:

Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչությունը Հր. Անանյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է ընծայել Լ. Ս. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» խորագրով աշխատությունը, որը, ինչպես հավաստվում է նախապես, ճշմարտված է V դարի գրական հայերենի բառակազմական համակարգի ամբողջական նկարագրությանը:

Դա, անշուշտ, լեզվաբանական-գիտական կարևոր նշանակություն ունեցող խնդիր է, որի ուսումնասիրմանը ձեռնամուխ լինելով՝ բազմական զգալի աշխատանք է կատարել հեղինակը:

Հայտնի է, որ հայ հին գրական լեզվի գրաբարի ուսումնասիրությունը, շատ վաղ ժամանակներից սկսած, զբաղվել են բազմաթիվ հայազնա-լեզվաբաններ, քերականներ, բառարանագիրներ և ձգտել համակարգաբանորեն ներկայացնել նրա իրական պատկերը: Հասկանալի է, որոշակի նվաճումներ են ձեռք բերվել նաև բառակազմական իրողությունների ուսումնասիրման ու լատարանման բնագավառում: Եվ, այնուամենայնիվ, հին հայերենի կամ գրաբարի բառակազմությունը ամբողջա-

կան, սպառել լուսաբանություն չի ստացել՝ մանավանդ զարգացող լեզվաբանական գիտության առաջադրած նոր պահանջներին համապատասխան:

Լ. Հովսեփյանը այդ նկատառումով էլ ահա գրաբարի բառակազմությունը քննություն է առել կառուցվածքային լեզվաբանության առաջադրած կազմակերպչին սկզբունքներով և փորձել ցույց տալ, թե բառակազմական ինչ պատկեր են ներկայացնում բարդ և անանցավոր բառերը V դարի գրաբարում:

Լ. Հովսեփյանի աշխատանքն ըստ էության երեք մասից է բաղկացած: Առաջին մասում (էջ 5—94) համառոտաբար խոսվում է ընդհանրապես հայերենի բառակազմության ուսումնասիրման պատմության, նյութի ընթերցման ու նկարագրության սկզբունքների, բառակազմական կազմակերպչի ու միավորների, հիմքակազմության մասին և հող պատրաստվում այդպիսով մյուս երկու մասերի՝ նախ՝ բառարանական և ապա՝ անանցման (տե՛ս Գրաբարականությանը էջք 95—157, 158—357) կազմակերպչի պատկերման ու վերլուծության համար: